ՀԱՍՄԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑՈՒՄ»

Փաստարկման խնդիրների հետազոտությունը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում» իրականացվել է հետևյալ տեսանկյունից. փաստարկումը դիտվել է որպես որոշակի գիտական տեսության լեզու՝ իր համապատասխան իմաստաբանությամբ և շարահյուսությամբ: Այդ հենքի վրա բացահայտվել են դիտարկվող աշխատասիրությունում կիրառվող փաստարկման հասկացութային կազմը[1] (վերակառուցվել են տրամաբանական հասկացությունների դաշտ, իմացաբանական հասկացությունների դաշտ, հոգեբանական հասկացությունների դաշտ, բարոյագիտական հասկացությունների դաշտ և մի շարք այլ հարակից հասկացությունների դաշտ, դրանով իսկ վերհանելով փաստարկման ոչ միայն բացահայտ, այլ նաև՝ ոչ բացահայտ ձևով ներկայացված հասկացութային ողջ հարստությունը[2]) և մեթոդների ու հնարների ամբողջությունը: Վերջին-

[1] «Եղծ աղանդոցում» փաստարկման հասկացութային կազմի վերակառուցումը հնարավորություն է տալիս համադրել այն ժամանակակից տեսությունների հետ և համեմատական վերլուծությամբ նշմարել վերջիններիս գիտապատմական ակունքները: Այդ վերլուծությունը սկզբունքային եզրահանգումների և ընդհանրացումների հիմք է ծառայել: Հետազոտությունը և համեմատական վերլուծությունը ցույց են տալիս՝ ա. տրամաբանական և էթիկական հասկացությունների ուժգին դաշտի առկայությունը, բ. փաստարկման ժամանակակից տեսությունների ոչ բոլոր տարրերն են, որքան էլ դրանք էական և կարևոր լինեն, դրսևորվում «Եղծ աղանդոցում»:

[2] Ակնհայտ է, որ մի շարք հարցերի Կողբացու ըմբռնումն անվերապահորեն առընչվում է փաստարկման նախապայման հասկացության մեջ ընդգրկվող խնդիրների քննությանը: Խոսքը, մասնավորապես, «Եղծ աղանդոցում» մեկնարկվող ճշմարտություն, ճիշտ, ճշտություն, ճշմարիտ, հավաստի, ճշմարտության թշնամի, արդարության թշնամի, ճշմարտասեր, մոլորություն, սուտ, կարծեցյալ և ոչ արդարացի և այլ հասկացությունների մասին է, որոնք կարելի է դասել փաստարկման նախապայմաններից՝ իմացաբա

ներիս մեջ, մասնավորապես, առանձնանում են հարց ու պատասխանի (ինտերոգատիվային) տրամաբանության տարրերն ու դրանց դրսևորումները[3]:

«Եղծ աղանդոցում» կիրառվող փաստարկման շարահյուսական հնարներից, ամենից առաջ, հարկ է նշել.

1. *Հակառակորդի, նրա վարքի, դիրքորոշման արժեքավորումը,* որի ընթացքում առողջ զգույցն ու վիճաբանությունը երբեմն-երբեմն խաթարվում են, ինչը դրսևորվում է հակառակորդին անպատվող, նրա անձը վիրավորող արտահայտությունների մեջ: Այսպես, «Ահա այսպիսի աններդաշնակ իրողությունները ճշտությամբ չըմբռնելու պատճառով կարծեցին, թե չար բանը էությամբ է (այդպիսին): Բայց աստված մարդուն ստեղծեց այնպես խելոք, որ և՛ դարմանիչները կարողանա վայելել, և՛ վնասակար կարծվածների օգտակարությունը հնարագիտությամբ գտնել՝ հանդիմանելու անմիտների մոտեցումը, (հաստատելով), թե չկա որևէ բան, որ էությամբ չար լինի»[4]: Մեկ այլ դեպքում կարդում ենք. «Փիլիսոփաներից ուրիշ շատերն էլ, առասպելական խոսքերով ցնորաբանելով, հանձն են առնում աստծու մասին մեկնաբանություններ տալ» (Եզնիկ, էջ 151):

Ընդվզելով էպիկուրականների այն դրույթի դեմ, թե իբր աշխարհն ինքնագո է, կազմված մանր, անտրոհելի ու անբաժանելի փոշեհատիկների շարժումից և դրանց թանձրացումից, որով նրանք, ըստ էության, մերժում էին աստծո և նախախնամության գոյությունն ու աշխարհի ղեկավարումը նրանց կողմից, Եզնիկը գրում է. «Որոշ փիլիսոփաներ սրանց արհամարհում են և ամենևին էլ չեն համարում (հատուկ) ուսմունքի հետևորդներ: Նրանց վերաբերմամբ է

նական գործոնների շարքին, իսկ բարի, բարիք, չար, չարիք, բարի ու չար նախանձ, բարի նախանձ, օգուտ, անօգուտ, օգտակար, վնասակար, պիտանի, անպիտան, արդար, արդարամիտ, արդարություն, վայել, անվայել կամք, կամք ու միտք, արժանի(ք) և այլ հասկացությունները՝ այդ նույն նախապայմանների էթիկական գործոնների շարքին:

[3] Այդ մասին տե՛ս Հ.Հ.Հովհաննիսյան. Հարց ու պատասխանի տրամաբանության դրսևորումները Եզնիկ Կողբացու «եղծ աղանդոց» աշխատասիրությունում. Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, հ. 2, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2001, էջ 103-113:

[4] Եզնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց», Երևան, «Հայաստանի հրատարակչություն» 1970, էջ 61: (Ստորև սույն աշխատության էջերը կնշվեն տեքստում հետևյալ կերպ՝ Եզնիկ, էջ...)

առաքյալն ասում, թե՝ «Աշխարհում շրջում էին առանց աստծու»: Նրանք այնքան կամակոր ու համառ գտնվեցին, որ մինչև իսկ փիլիսոփաների աստվածների այնքան շատ նախիրներից և ոչ մի աստված չընդունեցին: Տեսնու՞մ ես, թե ստահակությունը ինչքան է բռնացել (այդպիսիների) ըմբռնողության վրա, որ (նրանց) մինչև անգամ անաստված է հեռացրել աշխարհից» (Եզնիկ, էջ 145):

2. *Հակադիր տեսակետներ արտահայտող դրույթների արժեքավորում,* որոնք հաճախ, Կողբացու պնդմամբ, «անվայել անմտություններ լինելու պատճառով, պատասխանի արժանի չեն» (Եզնիկ, էջ 144):

3. *Հակադրության (առկա կամ հնարավոր) առաջադրում և հերքում.* ««Բայց,-ասում են,- (աստված) արդարացիորեն արարիչ է կոչվում նրանով, որ անձևությունից ու տարտամությունից (հյուլեն) զարդի և կերպարանքի բերեց»:

Դա նման է նրան, որ մեկը քարերից շենքեր է կառուցում, միայն հարմարեցվածի ու կերտվածի արարիչ է լինում և ոչ թե բնանյութի: Եվ արդ՝ աստված ինչպիսի՞ բանի վերածեց անկերպարանը, լավի՞, թե անպիտանի: Եթե ասեն՝ լավի, (ապա) պարտավոր են քննել, թե որտեղի՞ց են լինում վրա հասնող չարիքները: Ուրեմն արդյունքները նույնը չմնացին ինչպես որ կային, այլ լավի վերածվելով երևում են միայն, լավ: Իսկ եթե ինչ-որ անպիտան բանի (էլ) փոխվեցին, կհանդգնե՞ն ասել, թե չարիքների պատճառն աստված է. չէ՞ որ նա արդյունքները լավի վերածեց» (Եզնիկ, էջ 43):

4. *Հակափաստարկների (առկա կամ հնարավոր) առաջադրում և հերքում.* Բայց ասում են, թե (աստված) հստակը մի կողմ զատեց, որից արարածներն ստեղծեց, իսկ մրրախառնը թողեց:

Ասենք ինչպես. թե որ (աստված) կարող էր հստակել այն և չարիքները մեջտեղից վերացնել, բայց չկամեցավ վերացնել, ուրեմն նրան չարիքների պատճառ պետք է համարել, որովհետև նրա (հյուլեի) մի մասից բարի արարածներ ստեղծեց, իսկ մյուս մասն էլ թողեց նույնությամբ՝ բարի արարածների ապականման նպատակով: Եվ եթե մեկը ճշմարտապես քննի հանգամանքները, հյուլեն կգտնի ավելի խիստ վտանգների ենթարկված, քան սկզբնական անկերպությամբ (էր) , որովհետև նախքան զատվելը և չարիքների վտանգներն զգալը ապահով ու անհոգ վիճակում էր, իսկ այժմ չարիքների ազդումը կրելուց տագնապի ու մոլորության մեջ է գտնվում...

...Իսկ եթե (ասում են)՝ աստված, չարիքները վերացնել չկարողանալով, (դրանք) թողեց նույնությամբ, դրանով թուլություն են վերագրում աստծուն կամ (կարծում են), թե էությամբ տկար է կամ թե երկյուղի պատճառով հաղթվեց իրենից ավելի զորեղ մեկից: Եթե երկյուղով իրենից ավելի մեծի կողմից հաղթված են կարծում, պետք էր չարիքները նրա կամքի բռնադատիչներ համարեն: Եվ չարիքները, որ, ըստ նրանց խոսքերի, կարող էին աստծուն հաղթել, ինչու՞ չպիտի լինեին աստվածներ» (Եզնիկ, էջ 43):

Մեկ այլ դեպքում, կարդում ենք. «Իսկ եթե այնպիսիներից մեկն ասի՝ «Լավ է, որ ամեն ինչի պատճառը մի էությունն եք համարում. և եթե մի էությունն է, որ բոլորի վրա ներգործում է ամեն ինչում, ու իրեն հակառակ որևէ բան չկա,, (ապա) մեզ ինչպե՞ս եք առաջարկում անարգել նրա կողմից ստեղծված երախտավորներին ու բարերարներին»:

Կասենք, որ մենք չենք առաջարկում նրա կողմից ստեղծված երախտավորներին ու բարերարներին անարգել, ոչ էլ, սակայն, արարչի պաշտամունքը արարածներին մատուցել» (Եզնիկ, էջ 35):

5. ***Փաստարկման անհետևողականության ցուցադրում.*** Այսպես. «Մի բան կա: Եթե դեռ ստեղծված չէին արեգակը և լուսինը, որոնցով ժամերն ու օրերը, ամիսներն ու տարիներն են որոշվում հազար տարին որտեղի՞ց էր երևում: Քանի որ մեջտեղում չկային լուսատուները, որոնք օրերի, ամիսների, ու տարիների թիվը պիտի ցույց տային, ուրեմն պարզ է, որ անմտությամբ լի են այն շաղակրատանքները:

Դարձյալ՝ եթե չկային երկինքը, երկիրը և ինչ որ նրանց մեջ է, որտե՞ղ կամ ինչո՞վ էր զոհ անում (Զրվանը): Երբ չկար երկիրը, ոչ էլ նրանից (բուսնող) տունկերը, բարսմունքը որտեղի՞ց էր գտնում՝ իր ձեռքում բռնելու. կամ թե ի՞նչ էր զոհում, քանի որ անասունները դեռ ստեղծված չէին: Եվ որ ամենից վատ բանն է, «Հազար տարի,- ասում են,- զոհ արեց և հազար տարուց հետո երկմտեց՝ ասելով. «Կլինի՞ ինձ Որմիզդ որդի. եթե չլինի, իզուր տեղը պիտի չարչարվեմ»: Եվ դա ցույց է տալիս, որ Զրվանը տկար, կարիքավոր ու տգետ էր. չարիքների պատճառն էլ նույն ինքն է և ոչ թե Արիմանը, որին չարիքների արարիչ են հռչակում իրենք: Բայց ինքը երկմտեց, որը անհավատալի և լիապես անկարգ բան է» (Եզնիկ, էջ 88):

6. *Հակասությունների բացահայտում ընդդիմախոսի դրույթներում.* «Այսպիսի անհավատալի և տխմարների մտքով կցմցված ցնդաբանություններին բոլորովին էլ պետք չէր պատասխան տալ, որովհետև բավական էր նրանց անմտությունը ցուցադրել հենց իրենց այն ասածներով, որոնք միմյանց հակամարտ են ու հակասական» (Եզնիկ, էջ 86):

7. *Հեղինակավոր կարծիքների հենքի վրա հիմնավորում, մեղադրում հեղինակության (բերված օրինակում՝ «Իմաստունի») կարծիքը հաշվի չառնելու, «անհամեստության» մեջ.* «Եվ որ սաստիկ հիմարություն է՝ հետո, ասում են, ինքն իրեն աստված անվանեց: Դա նրան պատահեց խիստ հպարտությունից, որովհետև նա չվարվեց ըստ իմաստունի խոսքի, թե՝ «Որքան էլ մեծության հասնես, քեզ խոնարհության մեջ պահիր»» (Եզնիկ, էջ 142):

8. *Հերքում հեղինակությունների վկայակոչմամբ,* որ ըստ Կողբացու, մի դեպքում, Սուրբ գիրքն ու նախնիներն են՝ «Արդ՝ աստծու եկեղեցու գործն է՝ արտաքիններին դատապարտել ճշմարիտ իրողություններով, առանց Գրքի, իսկ կարծեցյալ և ոչ արդարացի ներքիններին՝ Սուրբ գրքով:

Հյուլեին վերաբերող կարծիքը, որով հույները մոլորվեցին, բավական համարենք նախնիների խոսքերի քննադատությամբ հերքել. և պարսից կրոնը հնարողների հետ պայքարի մեջ մտնենք՝ ապավինելով աստծու շնորհներին» (Եզնիկ, էջ 84), մի այլ դեպքում՝ իրողություններն ու փորձը և կամ՝ Աստվածատուր գիրքը՝ «Այդ հերքում են իրողություններն ու փորձը, ինչպես և Աստվածատուր Գիրքը, որն ասում է, թե՝ «Ստեղծեց երկու մեծ լուսատուները և դրանք դրեց երկնքի հաստատության մեջ»» (Եզնիկ, էջ 137):

9. *Հակառակորդի համար հեղինակավոր կարծիքի, տեսակետի հերքում.* «Նրանք, որ աստծուն չեն ճանաչում և չեն կարողանում արարչին արարածներից զանազանել, ինչպե՞ս են մտքով անցկացնում աստծու մասին խոսել: Եվ մանավանդ նա, ով բոլորից իմաստուն է համարում Պլատոնին, որը համաձայնվեց խոսել աստծու, հոգիների ու արարածների մասին:

Ուրեմն մարտական խոսքերով մարտնչենք հենց նրա դեմ, որը բոլոր փիլիսոփաներից ավելի աստվածապաշտ է թվում հույներին: Որովհետև երևում է, որ նա առավել ևս չի ճանաչել աստծուն ու արարածների արարչությունը: Ուստի երբ նրա մեծարված կարծիքը խայտառակենք ու նրան իր կողմից խաբ-

վածների աչքից գցենք, այն ժամանակ ցույց կտանք, թե ո՞վ է աստված, և ի՞նչ են նրա արարածները:

Եվ մի բան, որը առավել անպատմելի է համարում Պլատոնը, այն է, որ աստված միշտ կար և արարածներ չուներ: Սիրում եմ նրա՝ աստված փնտրելու պատրաստակամությունը, սակայն ամբարտավանությունը չեմ գովում» (Եզնիկ, էջ 151)[5]:

10. *Հերքման այլ բազմաբնույթ հնարների իրականացում:* Սրանց մեջ ,մասնավորապես, առանձնանում է փաստարկման մի հետաքրքիր եղանակ, որ զարգացնում է Կողբացին՝ *ձևակերպելով դրույթը տեքստի (պրակների) վերջում:* Այսպես, «Եղծ աղանդոցի» Երկրորդ՝ «Պարսից կրոնի հերքումը», գրքի Ա, Բ և Գ գլուխներում տարվող յուրօրինակ բանավեճը հայ փիլիսոփան ամփոփում է Գ գլուխը եզրափակող «Եվ քանի որ սա (Զրվանը) ո՛չ արարիչ է, ո՛չ էլ արարած, (հետևաբար) երբեք էլ աստված չի եղել, չկա ու չի էլ լինի» (Եզնիկ, էջ 91) և Դ գլուխը եզրափակող «Սակայն այս բոլորից պարզ է, որ երբեք չի եղել Զրվանը աստվածների հայր, ոչ էլ թագավորություններ տվող» (Եզնիկ, էջ 92) դրույթներով:

* * *

Հոդվածում վերհանված են փաստարկման շարահյուսական մեթոդներն ու հնարները «Եղծ աղանդոցում»: Դրանցից յուրաքանչյուրը լուսաբանված է գրքից ընտրված օրինակով: Նշված մեթոդների ու հնարների հանգամանալից վերլուծությունը հատուկ հետազոտության խնդիր է:

---

[5] Այստեղ փաստարկման դիտարկվող հնարը զուգակցվում է վերը նշված՝ հակառակորդի դիրքորոշման արժեքավորման հնարի հետ: